



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 21

ՃԱՐԱԹ

20 ՅՈՒՆՈՒԱՐ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՒԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղրշ.	Տարեկան 54 Ղրշ.	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

Մենք ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱԳՈՅ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բովանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ Ե Ի ԼՆԿ

Մենք մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, չղթաներու և զոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պաղչե-գարու, Օոզգի-Պաֆ (Էօսէր-Էփէնի) վաճառասան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(T. Amadorian) شرکت صتیبه مطبعه — باب عالی جاده سنده قوسو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառահարի Թիւ 52

Հատոր 40 փարս



Ձեռնի, ոսկի ու ոսկի եւ ձեռնի
 Էվանգալմայն մեքենաներ
 Կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարեւորագործութեամբ ,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն ըովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐԼՈՒԱԿԱՆ
 ՄԱՍՆԱՎԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին :
- (2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկէր խան , Թիւնէլի ետեւը .
- (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համալ .
- (2. Սուլթան Պէյաղիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 :

ՍԵԻՒՏԱՐ

- (2 Զարլը Պօյու , թիւ 120 :

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
 343 կրկին , Տիւղօղլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 21

ՇԱՐԱԹ

20 ՅՈՒՆՈՒԱՐ 1907

ԵՐԵԿՈՅԹՆԵՐՈՒ ՇՈՒՐՁ

Եթէ մայիսին վարդի ամիսը անու-
նը կուտանք, ամենայն իրաւամբ յուն-
վարին ալ պէտք է ըսենք երեկոյթի
ամիսը, ինչպէս Հոգտեմբերին ալ այ-
դեկութի :

Դեկտեմբերի սկիզբէն մինչև Յուն-
վարի վերջերը անուններու տօնախմբ-
ութեանց և երեկոյթներու յաջորդա-
կան խրախճանութիւնք զիրար կը հա-
լածեն : Տարեցոյցներու մէջ այդ ամիս-
ներուն՝ չկայ օր մը՝ ուր յիշուած չըլլայ
Սուրբի մը անունը, չկայ շաբաթ մը՝
ուր նշանակուած չըլլայ այսինչին կամ
այնինչին անուակոչութիւնը, այնպէս
որ, զուարճասէր և մօկեմ երիտասարդ
մը, երբ նշանակուած անունները մի
առ մի շնորհաւորելու պէտքն զգայ,
անպատճառ անոյնկը և սիռե պօթերը

հանելու չէ երբեք, այնքան օր ընդ-
մէջ պէտքը զգալի է անոնց :

Մէկ քանի տարիներէ ի վեր ան-
ուան տօնախմբութիւնները սովորական
շնորհաւորութեանէն շեղելով՝ չքեղ երե-
կոյթի ձեւն առած են, այնպէս որ
հիմա անուն ըսելով՝ կը հասկցուի ե-
րեկոյթ, ճանս, միզիֆ, սուրե, և լուս-
ցընել :

Մենք սոյն տողերը դրելով՝ յիսուն
վաթսուն տարի ետ դառնալ և անուն
ըսուածը լէպլէպիով ու նարինջով ցե-
րեկից պատուասիրութիւնը յիշել կամ
կրկնել տալու նպատակ չունինք եր-
բեք, այլ քիչ մը ծանրանալ կուզենք
չափազանցութեան և ատոր հետեւանք-
ներուն վրայ, որուն տխուր օրինակնե-
րը ամէն տարի բերնէ բերան կը լսուին

առանց խրատական և չինչ հանգամանք մը տալու :

Ո՞վ չուզեր անուշ վայելքը , ո՞վ չի փափաքիր չքեղ երեկոյթ մը վայելել , ո՞վ չը սիրեր պարը , միւղիքը , խրախճանութիւնը , սակայն նոյն իսկ այդ անմեղ կարծուած զբօսանքներու հետեւանքը շատ կճու և տխուր կըլլայ , շատ անգամ և սովորաբար :

Պարզենք :

Երեւակայեցէք չքեղ երեկոյթ մը — որ ընդհանրապէս ձմեռ դիշերները կը սարքուի — տանը չորս դին լուսաշող , տաք և չէն-չող : Հրաւիրեալները ըստ սովորականին ժամը 3-4ին շալերու , բալթօներու մէջ փաթթուած մի առ մի կը հասնին ձիւնին , անձրեւին ու սառեցնող հովին կուրծք տալով : Մարմիններն թմրած պաղած վիճակին մէջ կուգան նետուիլ տաք սալօններու ծոցը , ուր իրենց ֆիզիքական կազմը անգամ մը կը ցնցուի ու ջղային դրութիւնը կը ձգտի պաղէն տաք մթնոլորտի փոփոխութենէն ազդուած : Պարերը կսկսին տակաւ , քան թունանքները ջուրերու պէս քրտինքներու մէջ կը ձգեն ենթակաները , որոնց կը յաջորդեն պաղ օշարակները , իբրեւ *rafrechissante* , երեւակայեցէք քրտնած ու տաք մարմիններն և տաք ստամոքսին մէջ պաղ օշարակին անակնկալ ներկայութիւնը : Պարերը կը շարունակուին , խառն ի խուռն ըմպելիներ , շաքարեղեններ զիրար հալածելով կ'երթան քաղմիլ ստամոքսին խորը , մին միւսը հրմշտկելով : Նորէն քրտինք , նորէն պար : Ատեն ատեն զովանալու համար՝ ըստ սովորականին տանը ցուրտ սենեակները քաշուելով քառորդ ժամ կամ կէս ժամ հանգիստ — միշտ քրը-

տինքին թաց խխուժ և յետոյ առաւօտեան զէմ սուքե : Արդէն ծանրաբեռնեալ ստամոքսին մէջ կուգան աղանդերները , պտուղները և ըն . . . , որոնք անուշ անուշ և անսորժանօք կը հիւրընկալուին յոգնած ու անզօր ստամոքսներու մէջ , ու . . . վերջէն՝ *sautebi* մը , հատ մըն ալ , վաղ մը , մինչ դուրսը արշալոյսը կը լուսաւորուի մեղմիւ , իբր ազդարար նշան երեկոյթին վերջաւորութեան :

Հիմա :

Նոյն բաղմութիւնը , նոյն եռուղեռ ժխորն է որ կը մեկնի տունէն , կը թողու տաք սալօնը ու քրտինքը չի չարցած դուրս կ'իյնայ փողոցը , ցուրտին , ձիւնին , անձրեւին բարակ շալով մը և կամ բալթօով մը : Կը մտնի , ակռաներն իրար կը զարնեն , կը սարսուռն , կը դողան , և այդ կէս հիւանդ վիճակին մէջ տուն կը հասնին , ուր իրենց կըսպասէ . . . ազեղ մահճակալը և տանը բժիշկը :

Սա չէ՞ մեր ըմբռնած սուսուէն կամ երեկոյթը :

Շատեր կը գանդատին թէ՛ օգերուն պատճառաւ հիւանդութիւնները անպակաս կըլլան Դեկտեմբեր և Յունվար ամիսներուն մէջ , մինչդեռ ճշմարտութիւնը այն է որ , անպատճառ տեղի տրուած է , բռնի հրաւեր կարգացուած է հիւանդութեանց , մանաւանդ էնֆլիւէնցային , որ ժպիտ ի շրթունս սուսուէ քանսանք տուններու դռան առջեւ կսպասէ բազկատարած գրկելու համար 7-8 ժամ վեց ոտք վալս դառցողները , ու ատեն ատեն տաք սենեկէն ելլելով՝ ցուրտ ու մութ սենեակները քաշուելով բայ խոնարհող սիրավառ զոյգերը :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ. ՕՐԻՈՐԳ Գ.

Կը սիրեմ, Օրիորդ, երաժշտութեան ազ-
տոր կտոր մը, բայց օլին պոտիլը և դոցին
քնանալը. կըս րեմ վարդը, կը պաշտեմ մա-
նուշակը, հոգիս կուտամ ձեռքէս եկածին
չափ օգտակար ըլլալու համար իմ հմանե-
րուն և մանաւանդ ձեր նմաններուն. կը սի-
րեմ վերջապէս շաքարը, ծխախոտը, ազուր
ուսմանները, լուսինը, ոսկին, շրջադէսու-
ներու ֆուռֆուռն, հմայից և նրբամիտ խո-
տակցութիւնները, թատրոնը, աղուոր ձի մը,
սիրուն շուն մը, և շատախօս դեղձանիկ մը:
Չմոռնամ ըսելու թէ բարի բեռնակրի մը չափ
կը սիրեմ կրօնքս: Կը սիրեմ նաև . . .
քիչ մնաց անունը պիտի տայի եթէ իրեն
ինծի ըրած ամենօրեայ յանձնարարութիւնները
միտքս չգային:

— Նայէ՛, մէյ մըն ալ երեսդ չեմ նայիր,
եթէ մարդու բան ըսես:

Ինչպէս տեսաք, օրիորդ, մէկէ աւելի
քաներ կը սիրեմ:

Բայց ինչ որ ասանցմէ աւելի կը սիրեմ,
գերազանցօրէն գերադրապէս կը սիրեմ, այն
ալ աղջիկներու նամակ գրել է: Մանաւանդ
անունի աղջիկներու որք ինծի պատասխա-
նելու համար երբ որ գրասեղաննուն առջեւ
կ'անցնին, «այտերնին կը վարդանայ, պըր-
կունքի կը նռնանայ և ախորժակնին կը
բացուի . . .»:

Ասիկա պարզապէս ախտ մըն է վրաս,
որմէ բժշկուելու համար Արամեան վարժա-
րանի 78ի հոգաբարձութիւնը — (մի յոգնիք
հաշուելու. քսուսուն տարու եմ) — ալ չեմ
յիշեր ի՞նչ պատիժներու ենթարկած է զիս,
և գիտէ՞ք ինչո՞ւ. որովհետեւ օր մը սքան-
չելի թուղթի մը վրայ ողորմելի ոճով նա-
մակ մը գրած էի քովի սանուհիներէն մէ-
կուն, իրմէ ուզելու համար . . . Թէրգեանի
մէկ տետրակը:

Համողութեամբ, օրիորդ, որ այս իմ աղ-
կար կողմս երէկուան բան չէ:

Եւ, հաւատացէ՛ք, երբեք չեմ ամչնար
այս ունեցած հիւանդութիւնէս: Մարդիկ կան
որ որսալ կը սիրեն, օղի կը սիրեն, թուղթ

խաղաղ կը սիրեն, ի՞նչ մեծ մարդիկ ի՞նչ
խենդ բաներ սիրած են, ես ալ աղջիկներու
նամակ գրել կը սիրեմ: Ձեռքս չէ:

Ահա ասոր համար է, օրիորդ, որ ասանց
ձեզ ճանչնալու բազմը ունենալու, կը հա-
մարձակիմ ձեզ ուղղել ներկայս որ բայ է
ինչպէս ձեր աչքը և իմ պիւտճէս:

Դուք ձեր բերնով կը խոստովանիք թէ
18 տարու էք, խարտեաչ մազեզ ունիք,
վաւճաւուն աչքեր, ֆիկաւո և կարգաք և
պրիլ կը խաղաք:

Ախ, ինչո՞ւ համար, Աստուած իմ, դոց
նամակ մը չեմ կրնար գրել ձեզի:

Եթէ տօնկայ կարելի ըլլար, կ'երդնում
որ ամէն զոհողութիւն ընելու պատրաստ
պիտի ըլլայի և անկարելին պիտի ընէի ձեզի
հաճելի երջանալու համար:

Դուք այն ատեն թերեւս ըսէիք ձեր սո-
վորական կանացի քմշոտութեամբ:

— Սա լուսինը ինծի բեր:

Վայրկենական կերպով ձեր կամքը պիտի
կատարէի, մի՛ տարակուսիք ընաւ:

Ձեր ուզածը լուսին չէ՞:

Ո՛հ, ես այնքան ապուշ չեմ որ ծառի
մը վրայ մագլցիմ, ատիկա դժուար է, մա-
նաւանդ ինծի համար. ատկէ դիւրինը կայ:

Անմիջապէս պիտի ցտուքէի ձեր թուալէթի
սեղանին քով, պիտի յափշտակէի անոր վը-
րայի հայելին և ձեր դէմքին ձիւղ զիմացը
բռնելով պիտի ըսէի ձեզի.

— Օրիորդ, հաւատարիկ լուսինը:

Ես ապիտոութիւնը այսպէս կը համկնամ:

Գալով ձեր նամակին, անմիջապէս կըր-
նամ ըսել որ շատ սիրուն կերպով գրուած
կտոր մըն էք, և եթէ գիրը գրողը կը պատ-
կերացնէ, ինչպէս կ'ըսեն ապահովապէս ձեզի
հետ պրիլ խաղացած ատենս պիտի ջանայի
միշտ կորսնցնել, համողութեամբ ըլլալով այն
առածին ճշմարտութեան, որ կ'ըսէ. «Ով որ
խաղի մէջ կը կորսնցնէ, սիրոյ մէջ կը վաս-
տրկի»:

Իրաւ է որ շատ անգամ ինծի պատահած
է իրարու վրայ տասը բառի պէզդիկ կոր-
սնցնել և կէս ժամ յետոյ ամենէն անողորմ
մերժողական պատասխանը առած եմ օրի-
որդէ մը որ ձեզմէ աւելի աղւոր չէր, եթէ

երբեք դուք անկից գեղեցիկ էք, ինչ որ տարակոյսի տակ դնել չեմ ուզեր:

Ձեր նամակին պատասխան մը չէ այս գրածս, ո՛հ, ոչ: Ասոր համար յատկապէս ֆրոնիֆէօրներ ունինք մեր մէջ որոնք ուզուածէն աւելի կը զբաղին այդ խնդրով:

Կրնորք կ'ուզեն պրիչ խաղան, կ'ուզեն ծխին, ես բնաւ վնաս մը չեմ տեսներ հոգ:

Ընդհակառակը:

Երկու պարագային մէջն ալ գոնէ քանի մը վայրկեան լուռ կենալու դատապարտուած են, ինչ որ շատ նպաստաւոր է իրենց համար, և մանաւանդ մեզի:

Անշուշտ ըսածս ձեզ համար չէ, օրիորդ, քանզի կ'ենթադրեմ թէ գրածնուդ պէս ալ կը խօսիք:

Անոնք իրենց պրիչով շատ շատ քանի մը ոսկի կրնան շահիլ. իսկ դուք ձեր լեզուով շատ մը սրտեր, որոնց շարքին մէջ անշուշտ կը ներէք որ դնեմ նաեւ իմս: I

Յուսալով որ ուրիշ առիթներ ալ պիտի ներկայանան ձեր գրածներուն վրայ հիանալու համար, առ այժմ

Մնամ ... ձեզմէ հեռու:

Յ. ԱԼՓԻՍԻ

QUADRILLE NOUVEAUTÉ

Ստացանք ծանօթ և սիրուած երգահան Յ. Սինանեան էֆ.ի 41երորդ հեղինակութիւն Quadrille nouveautéն և որուն գեղեցիկ և արուեստական բոլոր նրբութիւններով օժտուած ըլլալը կը փրկէ հեղինակին անունը:

Ձմրան սա ամիսներուն սարքուած երեկոյթներու և ինչպէս նաեւ տանը մէջ զարնելու յարմար այս ընտիր հեղինակութիւնը յանձնարարելի է ամէն անոնց՝ որոնք կ'ուզեն տաք և չիք, ճկուն քառուիլ մը պարել:

Ուրեմն փնտռեցէք միմիայն

Quadrille nouveauté



ԻԶՄԻՐԵԱՆ ԴԵՄՔԵՐ

ՂՈՒԿԱՍ ՎԱՐՊԵՏԵԱՆ

Կակոր դէմք մը, գեղին սրածայր պիւսեր, երկայն բարտիւսիւ մը, պուֆօնիէօն անպատճառ քրիզանդէմ մը խօթած — հետեւողութեամբ Յ. Ալփիարի —, բերնին անկիւնը միացող սիկառ մը միշտ պատրաստ և շուտափոյթ քալուած մը: Ահա սիրելի բարեկամս Ղուկաս Վարպէտեանը, ամինասիրեւ լագոյն բարեկամը Հրանտ Մամուրեանին, — խմբագիր, չէ՛ չէ՛ ներեցէք — սնորէն «Ա. Մամուլ»ի եւայլքովն հանդերձ:

Հակառակ Հրանտ Մամուրեանի բարեկամը եղած ըլլալուն, համակրելի ու ազնիւ երկտասարդ մըն է Վարպէտեան, բառին լայն առումովն, ու բարի որքան որ պէտք է: Յաճախ ընկերային շրջանակներու մէջ իսկ, Հրանտին երեսին կուտայ իր ոչ-լաւագոյն նկարագիրը, ու խմբագրի անվայել կողմերը: Մեծ հաճոյքով կը հետեւի օրուան գրականութեան — որու ծաղիկներէն մին ալ ինք է — ու կը սիրէ Պոլսոյ լաւագոյն խմբագիրները, որոնց լաւագոյն կողմերը կը ցուցնէ Հրանտին, իր այդ պաշտօնակիցներէն բարի օրինակ առնելու համար: Իր սիրած թերթիւնուն մէջ լաւագոյն տեղը կը բռնէ «Հանրագիտակ»ը, որու խմբագրին դէմ Հրանտին ցոյց տուած տգեղ ու աղտոտ վարմունքը՝ մեծ ցաւով կը խօսի իր բարեկամներուն, ու ամէն անգամ «Հանրագիտակ»ին հետ չափուած ատեն Հրանտին բարեկամաբար կը խորատէ որ իր կոշիկեն վեր չելէ, ընթերցող հասարակութեան առջեւ ծաղր ու ծանակ չըլլալու համար ...:

Բաւական գեղեցիկ յօդուածներ ալ գրած է, մանաւորապէս ապրուած կեանք էր իր յուզիչ նորավէպերը, որոնց մէջ կարծէ յիշատակի՝ «Թոյնին գաւաթը», «Մայրական սէր» ևլն. ու այս ճիւղը բաւական լուռ մը շակած է: Նոյնպէս իր սրամիտ գրուածքներուն մէջ կարծէ յիշել՝ «Ճամբորդի մը գըլ-խուն եկածները» խորագրով ուղեւորական զբօսալի տպաւորութիւնները:

Բարեխրատիան երեկոյթներու մէջ ալ կը փութայ իր մասնակցութիւնը բերել՝ այն իր համով և սրամիտ մենախօսութիւններովը, որոնք այնչափ ծափեր կը խեն։ Աշխարհիկ սալօններու ներկայացուցիչներուն մէջ Յ. Ալ-փիարէն ետք՝ անմիջապէս ինք կուգայ, ուր այնքան կը վնասուի իրենց ներկայութիւնը՝ այդ վզլիւն միջնորոտներուն մէջ։ Աշխարհիկ երեկոյթներուն մէջ կարելի եղածին չափ խոյս կուտայ Հրանտին ներկայութիւնէն, ու մեռնիս իր հետ ո եւ է տեղ մը չի տանիր, քանի որ այդպիսի պարագաներու մէջ Պ. Հրանտ չիտիէ չիտակ խօսք մը իսկ չի կրնար խօսիլ... (սակայն այս ամէնը որ կըսեմ՝ կրկին խօսքը մէջերնիս ըլլայ)։

Ամէն օր պարտականութեան մը պէս՝ անգամ մը անպատճառ կայցելէ Հրանտին, որու հետ մէկտեղ աչքէ կանցունեն եկած յօդուածները, ու թերթին ինչ ինչ մասերը կը գրեն։ Յաճախ սիրելի բարեկամս Լուգա, — ինչպէս սովոր ենք կոչել զինք — թերթին սրբագրութեան պաշտօնն ալ կը կատարէ իբրեւ օգնական խմբագիր, Կ. Նաւասարդ երբ բացակայ ըլլայ։ Թերթին մէջ ալ յօդուած կը գրէ յաճախ՝ երբ տեղ մնայ, վերջապէս մէկ խոսքով՝ առանց Լուգայի Հրանտին համար աշխարհ գոյութիւն չունի։ Հրանտին աջ ձեռքը Վարպետեանն է, ու ձախ ձեռքն ալ Կ. Նաւասարդը...։

Այս ըսածիս իրեւ սպացոյց՝ անձնական պզտիկ անէքտոտ մը, եթէ կը բարեհաճին սիրելի ընթերցողներս։

Ասկէ առաջ երբ Հրանտ Մամուրեան կիսամետայ Մամուլը շաբաթաթերթի կը վերածէր՝ մեծ յոյսերով, — որոնք աւանդ որ չի պսակուեցան — գծուարութիւն մը ունեցած էր Կ. Նաւասարդին հետ, ամասկանի յաւելման մը մասին։ Այդ միջոցին Հրանտին անվերջ թախանձանքներուն վրայ, Կ. Նաւասարդին թողած պակասը մասամբ մը կը լրացնէր Վարպետեան։ Նոր շաբաթաթերթին երկու թիւերը հրատարակուած էին ու երրորդ թիւը պիտի հրատարակուէր այդ շաբթու, դեռ այս օրուան պէս միտքս է, շաբաթ օր երբ մինչև և կէս օր «Մամուլ» չըստացանք, իրիկունը պատճառը հասկնալու համար տպարան հանդիպեցայ, վերը նստած

էր Հրանտ, բարկացած ու դէմ կախ վիճակի մը մէջ։

— Հրանտ, ըսի անմիջապէս, ինչո՞ւ համար այսօր «Մամուլ» չի ղրկեցիր։

— Զգէ՛ Ստեփանս ըսաւ, տխուր չեշտով մը, սա Նաւասարդին հետ աւրուելնիս գէշ եղաւ, Լուգան երէկ Ա. քսար գացիր է, ու թերթն ալ չի սրբագրեց, այսպէս մնաց, վաղը իրիկուն պիտի գայ եղեր նայինք...։

— Եղբայր, ըսի, գիտեմ որ դուն չես կրնար սրբագրել, սակայն Լուգայէն զատ հոս մէկը չիգար որ սրբագրեր ու թերթը ժամանակին հանէիր...։

— Ա՛խ, ըսաւ, դուն չես գիտեր տմէնը, հիմա հոս հոն երթամ մարդ փնտռել, թերթը սրբագրել տալու համար, ամէն մարդ ետքը ինչ կըռն...։

Բարեբաղդաբար հետեւեալ օրը Ղուկաս Վարպետեան գալով՝ երկուշաբթի օր «Մամուլ» կը հրատարակուէր, իր յապաղման մասին սա շինծու երկտողը քրելով։

«Թերթս փոխանակ չարաթ օրուան՝ այսօր կը հրատարակուի, տպագրական մեքենային խանգարման պատճառաւ, այս առթիւ մեր ընթերցողաց ներողամտութիւնը կը խնդրենք»։

Փակելու պահուս յօդուածս, կը փութամ յայտնել թէ՛ Ղուկաս Վարպետեան, ի մօտոյ հրատարակութեան պիտի տայ՝ ապրուած կեանքէ ընտանեկան գեղեցիկ վէպ մը, որու հրատարակութիւնը գոհութեամբ պիտի ողջունէ անշուշտ ամէն ընթերցող։

Սալիկի

Ս. Ե.

Զ Ե Կ Ո Յ Յ

Գաւառներէն եղած շատ մը խնդրանքներու գոհացում տալու համար՝ կստիպուինք մեր բացառիկ թիւէն քօլէքսիօնի համար ի ձեռին ունեցած տասնեակ մը թիւերը տրամադրելի ընել ամէն անոնց՝ որոնք իրենց նամակին կը կցեն 3 ղրուշի 40 փարանոց քօսթայի փուլ։

ՀԻՆ ԶՆԻՆՇՏԱԳՐՈՒԹԻՒՆ

ԻՐԻԿՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ ...

ԳԻՆԵՏՈՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

— Կարելի է շտաբերուն հետաքրքրական երևելի վերնագիրս, սակայն պէտք է գիտնալ որ Գուժ-գարու, Եկնի-գարու և Սամաթիա բնակողները՝ օրուան տարբեր կենցաղավարութիւններ ունին:

Օրինակի համար, նախ և առաջ Պոլսոյ ժողովրդեան շուկայ երթուղարձին համար, առնուազն օրը երեք քառորդ ժամ քալել հարկ է. բայց այս անպատեհութեան գէժ գանգատիլ ոչ ոք մտքէն անցուցած է մինչեւ ցարդ:

Առաւօտեան կենցաղավարութիւնը գերթէ միօրինակ է. ոտանիկն ու արհեստաւորը տունէն մինչեւ ուղղակի շուկայ կը գիմն իրենց գործին. ոչ սրճարան կը հանդիպին և ոչ գինեատուն, գառնուկի նման հեզ և ընդհանրապէս բարեբարոյ: Իսկ իրիկուան ... խնդրը կը փոխուի. շուկայէն ուղղակի տուն չեն երթար, որովհետեւ անհրաժեշտ հանդիպելիք տեղեր ունին: Ումանք իրենց սովորութիւն ըրած են, շուկայէն վերադարձին նախ սրճարան մը երթալ և խոսքեայ բարեկամներուն հետ մինչեւ «կըտա վազթը» տնտեսնուալ ժամանակը, բարթի մը «իքի եիւզ» և կամ ուրիշ խաղ մը խաղալ՝ անկէ ետքը կ'երթան օրինաւոր կերպով խմելու:

Իսկ ուրիշներ՝ գինեպանը օդին ջուր չը խառնած գինեատուն համեղու համար, շուկայէն ոգի ի բռն ուղղակի գինեատուները զիմելով, իրենց սեփական սեղանները կը գրաւեն:

Ասոնցմէ զատ, գինեատան տրապէզին առջին կինստով, չորս հինգ հատ կոնծելէ յետոյ տուններին վերադարձողներ ալ կը գտնուին, բայց ասոնք թուով այնչափ քիչ են որ յիշելն անգամ աւելորդ է:

Անցեալ իրիկուն, բաղմամարդ կապելայի մը մէջ, հինգ վեց յաճախորդներ սեղանի մը շուրջը խմրակ կողմած, խմելով հետեւեալ խօսակցութիւնը կ'ընէին.

— Շիտակն ըսելով, այս խանութին օդի-

ին նման օդի ուրիշ տեղ չիկայ, ըսաւ մին առաջին գաւաթը պարպելով:

— Մէզէներն ալ գէշ է, ըսաւ ուրիշ մը, առաջնոյն օրինակին հետեւելով:

— Էյ պապա Համբար, ընդմիջեց սեղանակիցներէն մին, դարձեալ քու լուսանոգին ներուզ պատմութիւններով դուխ չուեցնենք, ան չէ ամա, առջի օրուան լրագիրը կարդացիք:

— Վայ, նորէն զխանութանձայի պաշլալեցիք նէ դործ ունինք, ըսաւ պապա Համբար:

— Լրագիրին մէջը ի՞նչ կար:

— Կի տը Մօբասանի վրայ շահեկան յօդուած մը կար. անձանօթ թղթակցուհի մը ունէ՞ր ես ...:

— Թաթախցուհի համար սըղըրի խաշլամային ջուրը պիրինձի է:

— Պապա Համբար, մեր ըսածները քու հասկնալիք բաներդ չեն. դուն հէմէն բաշալի, խաշլամայի ջուրին թիրիթ չինէ ու կեր:

— Զքեզ մեղայ օղուլ, մէյ մըն ալ լուխըռոյի չեմ խառնուիր:

— Պէ ախպար, դուն շարունակէ, Մօբասանի թղթակցուհին ո՞վ է եղեր:

— Ռուս ուսանողուհի մը. Կի տը Մօբասան կ'ընդամուծեանը ինչ որ ալ ըրեր է, գաղտնի նամակագրին ով բլլալը չէ կրցեր հասկնալ. այժմ ամբողջ Բարիլի թերթերը յիշեալ աղջկան օրուան կեանքովը կ'ըրալին. բայց աւանդ որ իւր օրերը համբուած են եղեր և երեւելի վիպասանին մահուան եղբորական նշանները, այժմէն իր թղթակցուհւոյն վրայ ալ տեսնուիլ սկսեր են:

— Ըսել է թէ այդ ուսանողուհին ալ երկար չպիտի ապրի, չիտալը քանի խորհիմ թէ այնպիսի անհուն երեւակայութեան տէր մէկը մեռաւ, սոսկալի կերպիւ կը յուզուիմ, բոլոր մտքերս գլխուս վրայ կը անկուին ...:

— Կարսօն ... եկու սա չիշս լեցու մամիկս կ'ըսէր որ հէմ լանք, հէմ երթանք:

— Սյո', հէմ լանք, հէմ երթանք. սակայն ասիկայ աղէկ գիտցէք որ Մօբասանի պէս անուղղական գիտնական մը, հաղիւ թէ հազար տարին անգամ մը կերելի ...:

— Զրնեղեղին համար է ըսածը, հարյուց պատա Համբար քովինն:

— Պատա, աղէկ ես ընես ես, բայց քիչ մը շատախօս ես, լռէ ու մոռիկ ըրէ:

— Բան մը չը հասկնալէս ետքը, բան չունիս նէ մոռիկ ըրէ, մուտաց պատա Համբար, և մխիթարուելու համար դաւաթ մը օղի խմեց:

— Իմ մասիս, ես Զօլան Մօքասանէն տւելի նստադատ կը համարիմ, իր գրածները մարդուս սրտին խորը կը թափանցեն: Զօլա ի «Լուրս»ը հրաշալիք մըն է, մինչդեռ Մօքասան երեւակայութեանց մէջ կը սաւառնի:

— Որչափ կոչա ճաշակի տէր ըլլալու է մարդ որ Մօքասանի չը հաւնի:

— Խօսքերնիդ կշռեցէք, պարոն:

— Պէ աղաք, աս Մօքասան ըսածնիդ ո՞վ է:

— Լռէ, պատա, լռէ, քու խելք հասցնելիք բանդ չէ:

— Ես իմ խօսքս կշռած եմ, պարոն, Զօլային Լուրսը ի՞նչ է. ուսաագնացութեան նկարագիր մը. Խաչին Արմաշ երթամ նէ, ես ալ կրնամ Զօլային Լուրսին պէս հատոր մը հրատարակել:

— Ասոր ըսելիք չկայ, կը շնորհաւորեմ զձեզ, միտն թէ ճամբան նայէ որ պարոն Զօլայի չընդհարիս:

— Ինձ նայեցէք, վիճարանութեան մէջ ծաղրաբանել չը վայելի. Բառինի, Լամբնէի, Շաթօպրիտնի, Լամարդինի և այլ երեւելի մատենագրաց քով, Զօլան ու Մօքասանը ի՞նչ նշանակութիւն ունին:

— Ես ասանկ ծիւղած հինցած մատենագիրներուն կուտ մը անգամ չեմ տար:

— Ես ալ՝ Բառինի ողբերգութիւններէն հազար անգամ գերազանց կը գտնամ Ֆլօրիանի հովուերգութիւնները:

— Նայէ Ֆլօրիան աղւար տեղ է. պարոն Դանիկը հախ ունի, ֆախաթ իմ գայած օրս հովիւ մովիւ չը տեսայ հոն:

— Կեցցես, պատա Համբար, բեր սա գաւաթդ լեցունեմ, և ըսէ մեզ թէ այս գերագէտներու մասին ի՞նչ դիտողութիւն ունիս:

— Ես ութիւնի հետ դարձ չունիմ, օղսւլ, քախիս կը խմեմ, քէֆս կը նայիմ:

Այս միջոցին, տիրող ժողովին մէջէն խա-

նութպանին ձայնը լսուեցաւ որ — աղաւար վագը՛թ տըր — կը պօռար:

— Վայ, ժամանակը անցեր է, ըսաւ մին և ժամացոյցը նայելով կրկնեց, այո՛, ժամը ճիշդ երկուքն է:

Բարեբաղդաբար գիշերուան ժամն երկուքին Պոլսոյ կողմը բոլոր գինետոհներն ու կապելաները կը գոցուին. ուստի մեր վիճաբաններն ալ մեկնեցան գինետոհէն:

Այժմ մենք ալ Զօլայի հիացողներէն պարոն Դանիկին հետեւինք, տանը դուռնէն ներս մտնելուն, մայրը դիմաւորելով ըսաւ:

— Ծօ աղայ, աս ո՞ր ատենի կալն է:

— Գաղինոն բարեկամներու հետ խօսակցութեան բռնուեցայ:

— Ատ ինչնի խօրաթուիլ է որ, մինչօք գիշերուան երկուքը կը քչէ կոր:

— Ինչ դիմեամ, իշտէ գրականութեան վրայ խօսեցանք:

— Գերականութիւնը մէյլսանա՞ն կը սորվիք կոր, վարժապետն ալ դահէր թէղկեահատարն է:

— Երկար բարակ խօսք հասկցնելու ժամանակ չունիմ, կերակուրը պատրաստ է նէ քիչ մը բան ուտենք:

— Մենք կերակուրեմ որ սահաթ է կերանք. մաղմաղին վրայ քեզի համարնօւտուլու եմ դրեք, գնայ թապալսը լեցուր կեր:

— Ամենքս մէկտեղ ուտէինք նէ չէ՞ր ըլլար:

— Մինչօք կէս գիշեր քե՞զ պիտի պէքլէյնէք. չէ՞նք շնորհք ատենին ել տունդ ելու, ի՞նչ էք հասկցեր աս զըլսմ բախիյէն:

— Պէ մարիկ, ի՞նչպէս հասկցունեմ, Զօլայի և Կի տը Մօքասանի վրայ վիճաբանեցանք:

— Ծօ Գէթէնին փեսան ի՞նչ է եղեր:

— Գեանին տակը անցեր է. հիմայ Գէթէնին փեսան ուրիշ հանեցիր. Կի տը Մօքասան ըսածս Գաղղիացի գրագէտ մըն է. բայց Զօլայի հանձարին չը հաւատարիր. Զօլայի Լուրսը մէկ հատիկ է:

— Գօլայի պուրաք ի՞նչ է ծօ, կէսէ աս գիշեր վախնամ շատ ես փախուցեր:

— Տէր Աստուած դուն ողորմիս, կը տեսնամ որ պատա Համբարին պէս քեզի ալ խօսք հասկցնելը զժուար պիտի ըլլայ, երթամ քիչ մը բան ուտեմ ու պառկիմ, ըսելով վերելի ուղցը ելաւ, ուր կրակարանի մը վրայ պտուկի մը մէջ նստուելուն ճգալով իրեն կը ստիպէր:

Ահա այս է Պոլսեցոյ՝ գրեթէ ընդհանուրին կեանքը, որ գժբաղդաբար տխուր է:

ԳԵՏԻՆՆ ԻՆՎԱՅԻ ՆԱՄԱԿ ՄԸ

Անցեալ շաբթու երեկոյքի մը մեջ վալսի մը է՛ն տալ ու զգլխի թուռին, օրիորդի մը ֆօտսին տակէն ինկած է հետեւեալ նամակը, զոր իբր նմոյց հայ գրականութեան յառաջդիմութեան, եւ իբր օրինակ արդի սիրային նամակներուն, նոյնութեամբ կը հրատարակենք ումանց ծիծաղ եւ . . . կարելի է ումանց ալ բարեի մը բրած ըլլալու յուսով:

Սիրեցեալ իմ էլսիս,

Այսօր մեծ պատեհ մ'է ինձ սոյն երկտողը ձեզ յուղարկել, իբր մի անունն շնորհակալեաց յայտարար նշան, իբր անմուտք երախտեաց մի շնորհակալիք: Այսօր պատեհ մ'է եւ ձեզ պատեհ՝ որով պիտի կարենաք չօգտիել իմ սիրտն եւ զգալ հոն՝ ձեզ նկատմամբ տածած այն նշանաւոր համակրանքն ու սէրը՝ զոր ձեր բարձր արժանիքը եւ ընտիր բարեմասնութիւնները գոյացուցած են: Այո, դուք որ առաջին անգամ զիս ի զբօսավայրն Թէփէ պաշտի տեսնելով հաճեցաք ձեր սիրոյ յայտարար մէկ նայուածքը ուղղել ինձ, ահա այն վայրկեանէն վստահ եղայ թէ՛ օր մը սրտերնիդ ալ ինձ պիտի տայիք:

Էլսիս, ո՛հ որչափ քաղցր կիջնէ այս անունը հոգւոյս մէջ, եւ կը հանդարտեցնէ սրտիս փոթորիկները, զոր լի ու լի բացատրելու համար կը տկարանայ միտքս չըթանցս վրայ եւ գրչիս տակ. բայց ի՛նչ, յուսահատութիւն . . ., ո՛չ, զի կը զօրանայ սրտիս մէջ, ուր սիրտն կը խօսի՝ միտքն անզօր է: Միտքէս աւելի սիրտս կը նուիրեմ, սիրտս որ զգացմամբ ամէն ինչ է:

Շատ անգամ զոր ինչ կը զգայ սիրտը, լեզու գրիչ վրձին զայն բացատրելու բառ, գիծ ու գիր չկարեն դնել: Սրտի լեզուն տիեզերական է:

Միթէ պատառ մը թուղթ, երկու կաթիլ մեղան, երկաթի կտոր մը բաւական են թարգմանելու սիրտ մը՝ որ ընտելեան եւ Աստուծոյ գլուխ գործսցն է: Իմացականութեան բոլոր նախասերմունքը սրտին մէջն է: Հոգին ու միտքը, հոգի եւ միտք ըլլալէ առաջ սիրտ են: Եթէ օր մը գրաբարագէտներու գրչաց ներքեւ ոսկի ձուլ-

ուեցաւ, եթէ օր մը վերգիլի, Հոմերի գրչաց վրայ քնար մը թրթռաց, եթէ օր մը Լամարտինի, Հիւկօի, Տիւմայի, Պայրընի, Շէքսպիրի, Միլտօնի մատանց ներքեւ լարեր թրթռացին, եթէ օր մը Կալէլէոսի, Նեւտոնի, Թորիչէլլիի մտքերն ու սրտերը երկնից անկողութիւնը թռան եւ երկրիս խորը սուզեցան, եթէ օր մը Անճէլօի, Ռաֆայէլի, Ժիլիէլէնի, Սյվազովսքիի վրձիններուն ներքեւ ներկեր ու գծեր գեղոյ խտաւներ ստեղծեցին, միթէ սիրտն այսչափով, միթէ զգացումն ասքանով բացատրուեցաւ. . .:

Ամէն սրտայատոյց եղելութիւն եւ ամէն սրտառուջ տեսարանի առջեւ սրտեր զգացումներ եւ տողումներ կ'ունենան: Նամանաւանդ իմ սէրս՝ չոր տերեւի մը սօսիւնը, թռչնոյ մը գեղգեղելը, վտակի մը կարկաշտ, ալիքի մը ծփալը, լուսնոյ մը փայլումը, արեգակի մը ճառագայթները, արշալուսոյ մը ծագիլը, վերջալոյսոյ մը մարիլը, ազդու նայուածք մը, եւ վերջապէս ամէն ինչ, ամէն առարկայ մէկ մէկ տարրեր կը տանջեն իրարու հակառակ հազար ու մէկ սիրային զգացմանց մէջ:

Այո, էլսիս իմ պաշտելի, այսպիսի սրտիկ մ'է զոր այսօրուէն քեզ նուիրելու կ'ուխտեմ, սիրտս է զոր քեզ կը նուիրեմ, սիրտս այս իր զգացմանց փոքրիկ մի հայելին եղող թղթոյս մէջ ծրարած:

Ձեր անունը մեծ է օրիորդ, մեծ նաբուլէճնի պէս, մեծ հիմալայաներու պէս, եւ ասի իմ քու սիրովդ նոր բռնկած սրտիս մէջ: Ձեր անունը բարձր է, բարձր՝ Բասկալի նման, բարձր՝ Նէվտոնի նման: Ձեր անունը վսեմ է, վսեմ Գոռնէյի նման, վսեմ Եղիշէի նման, եւ ասի դարձեալ իմ սրտիս մէջ:

Կը վերջացնեմ գրութիւնս, սա խօսքն ըսելով՝ սիրտս Ձերն է, ձերը՝ մինչեւ իր վերջին բաբախումը եւ յետին դարկը, ձերը մինչ յայնմ վայրկեան յորում քու սիրահարդ ալ մահկանացուն, անմահականի փոխէ:

Գեոգրէ ԳՏՆՈՂՐ
ՍՈՒՔԻԱՍ (*)

Ձերդ Երախտապարս
ՎԱՀԷ

(*) Այս չքնաղ նամակը եթէ վառարանի մօտ չի կարդացիր, կը յանձնարարեմք պատկած ատեննիդ կունտինիդ ալբօլ քանֆուէով կամ աղով լէմնով չփել, վերջէն զմեզ չանիծելու համար: Ծ. Խ.)

ՔԱՏԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՏԻԳՐԱՆ ՍԱՆՃԱՔՃԵԱՆ

[ԲԵՄԱԿԱՆ ԴԵՄՓԵՐ]

Թատրոնի ամենահին դեմքերէն է Սանճաքճեան, իր genreին մէջ շատ գնահատուած դերասան մը, կոկիկ, բիթ-բիթ, երեսունըվեց ակումներէն հատ մը չ'է մնացած բերնին մէջ:

Չափազանց կրակածոտ է ու թուլ բերան, ընկերասէր և աւելի ինքնասէր, բաւական լաւ ֆրանսերէն կը խօսի ու կը գրէ, և քիչ մըն ալ իտալերէն: Եթէ ակումները կորսնցուցած չ'ըլլար Քիսթապլի փայլուն յաճախորդներէն մէկը կրնար ըլլալ: Իր ապրելակերպին ամենէն զաւեշտական տեսարանը իր իսկ դեմքին վրայ տեղի կունենայ երբ կերակուր ուտելու նստի, մարդ կը մարի խնդալէն, երբ պատառները ծամած միջոցին թուշը քիթին և քիթը թուշին բարեւ կ'ուտան: Խմած ատենը՝ բնականաբար շատ շիւրին կըլլայ, իր երկու աչքերը նպատակակետէն կը շեղին: Քիթը միշտ ափին մէջ ու ափը քիթին վրայ tour կընէ, և ըսել թէ՛ կին մը որ անոր այս վիճակը տեսնալով cour չընէ: Վայրահակ պիտերուն տակէն չըթուէնքները լուռ եղբերք մը կը յօրինեն միաձայն, չըլուկ ... չըպ ... ու ֆըռթ մը և գաւաթը կը պարպուի ի մի ուժպ:

Sig. Diego Carabati, այսինքն՝ Տիգր Տիգրան Սանճաքճեան, համեստ ապրողի մը տիպարն է, աննախանձ ոգի մը ունի և իր ընկերներուն ունեցածին երբեք աչք չունի:

Սանճաքճեան՝ երբեմնի այս բեմական աշխատաւորը մէկն է այն գովիներէն՝ որոնց տեղը պարտաւ է միշտ և չը եցուիւր արժանապէս: Թրեանց, Չափրաստ և Սանճաքճեան, Օսմ. Թատրոնի նշանաւոր երրորդութիւնէն միայն վերջին երկուքը մընացած են, Չափրաստ՝ իր չափահաս զաւկին զառն կորուստին տակ ընկճուած և մատնուած նիւթական անձկութեան, իր ծերութիւնը յառաջացած է ու ֆիզիքական ան-

կարողութեան մատնած զինքը (*): Սանճաքճեան սակայն չնորհիւ իր զգաստ կեանքին և իր զաւակաց իր վերջին օրերուն մէջ պիտի կրնայ հանգստօրէն և համեստօրէն ապրիլ:

Անէքթոտ մը Սանճաքճեանի թատերական կեանքէն:

Անդրիանուպոլիս էինք խումբով, Սանճաք Արմիկ տուտուի մը տունը կը բնակէր: Օր մը մէկ քանի ընկերներ գեղեցիկ օգէն օգտուելու համար, որոշեցինք պտրտելու երթալ տաղանակ ուխտի դէպ ի ելալըրմ (**): Ճամբայ ելանք և գացինք Սանճաքին. որպէս զի ընկերանայ, երբ սենեակին դռնէն ներս մտանք՝ ինչ կուզէք որ տեսնենք, մազերը ցցուած, թուղթի կտորներ սփռուած չորս կողմը, գլուխը ձեռքերուն մէջ և աչքերը դէպ ի առաստաղը սեւեռած էր, Սանճաք այդ վայրկեանին անանկացող վաճառականի մը երեւոյթն առած էր. ահաբեկած էինք:

— Ինչ կայ Պ. Տիգրան, ինչ ունիս, հարցուց մերիններէն մէկը:

—

— Ինչ եղար Սանճաքճեան, ատ ինչ վիճակ է կրկնեցինք:

— Սո'ւս պէ' ... չըլտըրաճարմ ...

— Ծօ' ինչ եղաւ, ինչ կայ ...

— Ինչ պիտի ըլլայ, բարաս պակաս է:

Ինչ մեղքս պահեմ, Սանճաքին այս խօսքերը մեր սիրտերն ալ թունտ հանեցին, և անմիջապէս բոլորուեցանք շուրջը, մատիտ գրիչ մեղան թուղթ մէկգմէկ անցան, ու աւանդաւ մէկ:

— Նայինք որչափ բան կը պակսի, սա տետրակները տուր նայինք:

— Ինչ պիտի նայիք պէ', գոչեց Սանճաք, չորս ժամէ կը հաշուեմ կը հաշուեմ քառասուն փարայ կը պակսի կոր ... tableau

— Վա՛յ խերդ անիծեմ Սանճաք, խենդ ես ինչ ես, քառասուն փարային համար այսչափ տանջանք, և մեղի ալ դող հանելու

(*) Օսմ. Տրամաթիկ խումբը կը ստորաբէ իր հին և արժանաւոր ընկերին, և պիտի օգնէ միշտ իր կարողութեան սահմանին մէջ:

(**) Էտիքնէի մէկ արուարձանը:

տեղը կա՞ր, հայտէ ձգէ ու ելիր Երևանը:

Խեղճ Սանճաք մեղ հեռ գալ չէր ուզեր, միշտ քառասունոցին հաշիւը ընելով. սակայն վերջապէս մեր ստիպումներուն վրայ ընկեալ քաղաք մեզի, քաղաքէն մինչեւ Երևանը կէս ժամ կամ երեք քառորդ հեռաւորութիւն մը կայ, առանց չափազանցութեան կրնամ ըսել թէ՝ ամէն մէկ հինգ վայրկեանը անգամ մը քսակը կը հանէր ու կը հաշուէր դրամները, միշտ մոլորալով:

— Զանք մը պու գութուչ նե՞ օլտու, հասըլ օլտու տէ էքսիք կէ տի . . . :

Եւ վերջ տալու համար իր մտահոգութեան, և քիչ մըն ալ մեր հանգստութեան սիրոյն՝ հանեցինք քառասունոց մը տուինք հաշիւը փակելու համար: Ուսկից ի վեր ինք տարիներ անցած են և այդ քառասունոցը ոչ ան մոռցած է՝ և ոչ ալ ես . . . առած:

Վ.Ա.Ա.Ն. ՇԱՀԻՆԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԻՆ ՕՐԵՐ

Պուէս Խաչատուր Միսաքեան եւ իր ժամանակակից իմացականին վրայ հայեացքներ:

Գ Ր Ե Յ

Տ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ

Այս պատմական ու բանասիրական գործը, որուն շատոնց կը սպասուէր, լոյս տեսած է այս օրերս Սաքունան տպարանէն: 40ի չափ ամիրոյի էջերու մէջ՝ կը պատկերացունէ 19րդ դարու թուրքահայ դրականութեան և երեւելի անձերու գոյնզգոյն նկարագիրը, ծանրանալով դիտաւորապէս Պուէտ Խաչատուր Միսաքեանի վրայ, որ այդ անձերուն ամէնէն կարկառուններէն էր՝ իբրեւ բանաստեղծ-փիլիսոփայ:

Կը ծախուի Կ. Պոլիսի բոլոր դրամաձաններուն քով:

Գին 7½ դր.

ԶԸԼԼԱՐ . . .

— Ամեն ամուսնութիւն իրարու յարմար չըլլար

— Ամեն ծանրաբաւ աճ ծանրաբարոյ չըլլար

— Ամեն բարիք բնոյ բարեբար չըլլար

— Ամեն գրող գրագէտ չըլլար

— Ամէն քաղաք սանքիմ օծիմով ու նուփօթ գրավարով միւսիւ չըլլար

— Ամեն քաղաք հարուստ արտով հարուստ չըլլար

— Ամեն անուշ բան մեղր չըլլար ինչպէս ամեն քրու բան բուռնի եղածըլլար

— Ամեն սեր սեր չըլլար ինչպէս ամեն կարէ ուր չըլլար

— Ամեն գիտցածդ մարդու բոլ չըլլար

— Ամեն օր (հանի որ քաղաքան չես) նոր լարեր հագնիլ չըլլար

— Ամեն կերածդ մարսել չըլլար

— Ամեն կնկան հարսն երեւ չըլլար

— Ամեն ետ գիտեմի բան մը գիտցած չըլլար

— Ամեն բարեկամ բարի կամեցող չըլլար:

— Ամեն մեծ անոթն բազմաւանկ ըլլալուն համար մեծ չըլլար

— Ամեն դեղ տուլ բժիշկ չըլլար

— Ամեն գրիչով յօդուած գրել չըլլար

— Ամեն նաւի ապուր ունել չըլլար

— Ամեն կարի անարատ բնով վստահիլ չըլլար

— Ամեն ամապիտուն երբ վարժապետ ես ամապան առնել չըլլար

— Ամեն գլուխ ոչխարի գլուխ չըլլար

— Ամեն կտուր շապիկ չըլլար

— Ամեն հարսնիքի, կնուքի, մեռեի, ուրախութեան, տրտմութեան, յաջողութեան, անյաջողութեան, եւն. եւն.ի ասէն օղի խմել չըլլար:

— Ամեն փոքի ցաւ սաննի չըլլար

— Ամեն սիրացու եռանայնի չըլլար, ինչպէս ամեն եռանայնի սիրացու չըլլար

— Ամեն նոր հարս նոր չըլլար

— Ամեն ամուսնութիւն ընտանիք կազմելու գաղափարով չըլլար,

— Ամեն քաղաքան եղող կանխաւ հրաժարական չը գրած չըլլար:

— Ամեն աղագախանամ մի միայն աղագներ խնամած չըլլար:

— Եւ արդէն յայտնի բան է քե ամեն մարդ ալ ինձ պէս պօպօղազ չըլլար:

Մնամ Սիլեսար

ԵՐԵՎԱՆ

ՕՐՈՒԱՆ ՄԻՒՍԻՒՆ ?

[ԶԻՒՆԱԲԵՐ ՅՕԴՈՒԱԾ]

Էր երբեմն յորժամ ոչ էր չէյթան առա-
պասին, կամ էր երբեմն յորժամ հասուկ ող-
ջիկ մը իր քառասունը և հինգ դարուններուն
մէջ էրիկ մարդու ինչ ըլլալը և ինչ կոչում
ունենալուն գիտակցութիւնը չունէր, զո-
քանչները փեսերուն չէին երեւար, Արա-
համ Այվազեան իր եռուղեւ տարիքին մէջ
« ես քովէն դուք մէջէն » ուլ քատուլ կը
խաղար, ըմբիկին ու Բալթիֆեռին տեղ թո-
նիրին տակ կամիթ կը խաղային, յիսուն տա-
րու մարդուն « ճաշիկ » կըսէին ու քուլթէ-
զանութիւնը ընողը եկեղեցւոյ բեմէն կը բա-
նադրուէր, ահա այդ երանելի թուականին
Միւսիկ կըսէին ան տէլմէ չաթմա գլխար-
կաւորներուն, որոնք Եւրոպայէն դարձած
կըլլային իւր բժիշկ :

Հիմա, Բոլսմայառ խաղալու պէս, աչքդ
դոցէ միւսիւ բռնէ հրապարակին վրայ, և
պէտք է գիտնալ որ միւսիւներու հրապա-
րակը Եմին Կոնիւր ընդարկելուց, հրապա-
րակէն ալ վարեանց է այնքան ածան, այն-
քան ստուար :

Ինչպէս օրիորդ մը մասնագէտ անունը կը-
րելու համար հաղած ֆիստանը պէտք է սօ-
թերուն վրայ իյնայ, մաղերը վեր շտկէ,
քօռսէին մէջ քիչ մը քուռ թխէ, և դիտ-
նայ էրիկմարդու աչքին մէջ նայելով՝ խոխը-
տոցնել անոր սիրտը, նոցնպէս ալ միւսիւ
ըլլալու համար անհրաժեշտ է՝ դպրոցէն չք-
ջանաւարտ ըլլալ, բռնուելու աստիճան մը տա-
պէսներ կընել վրայի չրթունքին՝ քիթին տակ,
մաղերը Պանչէ-գարու կամ Բերա կտրել տալ
և գիտնալ զանոնք շտկելու սխալէմը սառ-
նիճի ջրով և թօքալա եղելով, օրիորդ մը
կամ կին մը տեսած ատեն կարմը՝ ճերմկաւ
և ի վերջոյ գլխէն մինչեւ ոտքերը ցնցուի,
չարաթականէն մաս մը խնայելով՝ կիրակի-
ցու փողկապներ գնել ևն. ևն. ևն. :

Ահա միւսիւ ըլլալու կամ միւսիւութեան
անհրաժեշտ պայմանները :

Օրուան միւսիւին վրայօք ընդարձակ և
որոշ դադարաւ մը տալու համար մէջ բե-
րենք անոր ընտանեկան ներքին կեանքը :

Առաւօտուն արթննալուն մայրիկը՝ իւր
կատարեալ femme de chambre, կաթը պատ-
րասակով կը հրամցնէ, մինչ միւսիւն քան
վայրկեան մաղերը հայելին դէմ շտկելէ
վերջ, կանցնի սեղանին գլուխը և կսկսի
ֆոթիկ, իւր թէ իր տունը օթել մը ըլլար և
ինքն ալ բանսիօնէ :

Մեկնած ժամանակ չի մոռնար մայրիկին
միջնորդութեամբ հայրիկէն քառորդ մը կտր-
դել իւր ցերեկուան ճաշի և շոգենաւի ծախք...
մինչեւ որ չարաթականը աւելցնէ բաթօնը :

Շոգենաւին մէջ առաջին տոմսակ կառնէ,
թուամկային մեկիւլին կը նստի և շոգեկառքը
երկրորդ կարգ :

Այնչափ մաքուր կը հազուի որ երբ վա-
ճառատունէն ներս մտնայ, հոն դռնուող
պաշտօնեայնեքը առաջին ակնարկով բաթօնը
կը զիտնան և նստատեղինին երկու մաս հա-
զիւ վեր առած քմծիծաղով մը դործերնուն
կը նային, պզտիկ պատրասքի մը զոհուած
ըլլալու յուսախաբութեամբ :

Բաթօնին ներկայութեանը մուկ կը կըտ-
րի, իսկ անոր բացակայութեանը՝ Բամշաթ-
կայի վարչապետը ոչինչ կարծէ մօտը :

Ցերեկուան ճաշին կընտրէ այն ուէսթօ-
ռանները՝ ուր կը գիմեն իրմէն շատ բարձր
ու վեր մարդիկ ... հասակով չէ դիւքով,
bien entendu ! ու հայրիկին քառորդը բակա
ընելով դուրս կըլլայ սիկառ ի բերան, ինչ-
պէս պիտի ընէր պանք ս'անկլըքեռի ընդհա-
նուր արկղակալը ? ? ?

Երեկոյին, մաղազային մէջ բաթօնին
կարդալէ վերջ մէկդի ձգած լրագիրները,
մէկ քանի լեզուէ, ծրարելով, բալթօն
դուրսի գրպանը կը դնէ ու շոգենաւին քա-
մառան բաղմած՝ բաղմաց մէջ մէկը կը ձգէ
միւսը կը պարզէ, մտնաւանդ Լեվանք Հեռալքը,

հասկացնելու համար թէ՛ Անգղիէրէն ալ գիտէ, Գաղիէրէն ալ, և սակայն փոխանակ լրագրին մէջը կարդալու՝ առաջին երեսին վրայ փոքրամիտ տեսլականացիօնէ իրաւիական կամ Լոյս Օրուի թիւերէն աղերսներն վրայ կը պտտցնէ՝ ակնոցաւոր աչքերը ... և յաճախ չորս դին:

Աստուծոյ ծանօթ դէմք մը կը խնդրէ բարեւելու համար, և այն օրը որ իրմէ վեր մէկու մը բարեւ տայ շոգենաւին մէջ, այդ օրը իրեն համար նշանաւոր կըլլայ, և ուրախութենէն՝ վաթսուսնոց ծխախոտը պատրաստ զըմանալը կը փոխէ:

Իսկ երեկոյին տուն հասնելուն, ուր մայրը ինչպէս ըսինք մայր ըլլալէ դադարած, իր միւսիւ գաւկին *femme de chambre* դարձած է, հովանոցը ձեռքէն առնելով՝ տաք սենեակը կը հրամցնէ իր զաւակը, ու հոն կսկսի մեծխօսիկութիւնը:

— Օ՛հ ... այսօր չորս անգամ պանքային տիւղէթօնին դայի, ան ալ թօհաֆ է, ինծի տեսնալուն պէս կ'ուզէ քի ժամերով քովը նստիմ գաղիէրէն խօսինք ...

— Էյ զաւակս, քեզի պէս ճուր ճուր խօրաթող մը ո՛ւր պիտի գտնայ, մարդը հավէտը քէնէ կառնէ զանէր, կրտէ միամիտ մայրը, ամուսնոյն երեսը նայելով խնդում երես, ասանկ զաւակի մը տէր ենք եղեր տէյի, մինչ միւսիւն կը շարունակէ,

— Մեր չօրպաճին ըսես նէ՝ բիւթիւն բիւթիւնէ գործերը վրաս ձգեց, ինք հիշ բանի չի խառնուիր կոր, նամակները գրէ, իմզա ըրէ, բարաները քացան դիր, դուրս հանէ, տէֆթէրը անցուր ... հիշ հալ չունիմ հիշ ...

— Երկու աչկը քէօռնա, գտեր է քեզի պէս հաթիմ պիթիմ տղան ան է ... հէլէ դուն չըլլայիր տէ կը տեսնար անիկա թօփ նետելը, զիյանը ...

— Ան ինկիլիզ, ֆըռանաղ, հոռոմ քօմիսիօնճիներուն հետ խօրաթելս, անոնց հիսապները նայիւս, սիրտ փոր հատցնելս, անոնց երթալ տէ խախլէ ապսպրելս ...

— Աս ի՞նչ է, ուշախ չիգա՞յ քի խախլէն դուն կապսպրես կոր, քեզի պէս պաշ հաղըծի մը նա՞սըլ խախլէ ...

— Աման չէ՛ ... յոգնութենէս շաշըմիշ ըրի ... սանքի ուշախին ըսելս քի, երկու

խախլէ ապսպրէ տէյի ... կրտէ միւսիւն ինքզինքին գալով և բուն իր պաշտօնէն պատմած ըլլալուն սրտնեղութեամբը:

— Հա՛ շէօյլէ ... ես ալ շաշմիշ եղայ քի ...

— Էյ օղլում, կը ձայնէ հայրը անկիւնէն, որ մինչեւ այն ատեն ոկ մտիկ կընէր, աղեկ ես', ատ քու ըսածիդ նայելով՝ մաղազան մինակ դուն կը դառցունես կոր եղեր ...

— Հա ես, եռմուռճախը տանի, աս դրած իքէն աստար պիլկիճութիւնովը զօ՞ւր ինչ է քի պաշխա մարդ պունէ, գտեր է հէզարիֆէնտ տղաս, թէփէ թէփէ խուլլանմիշ կըլլայ կոր, կրտէ մայրը, կէս բարկացած:

— Դուն սուս կընիկ, ասիկայ ամէրիքան վարտիքի կտոր ձգել չլմանիր, քու խելքդ չի հասնիր, ձգէ քի ես բան համկնամ:

— Հայրիկ, բիւթիւն գործերը վրաս են, ինչ ըլլայ նէ ինծի կը կանչէ, ինծի կուտայ:

— Աղեկ, կրտէ հայրը, շարունակելով իր հարցափորձը, տօպեա տէֆթէրը ո՛վ կը բռնէ կոր ձեր մաղազան:

— Միւսիւ Օննիկը:

— Թահիլտարնիդ ո՛վ է ...

— Միւսիւ Բարսեղը ...

— Կէօմրիւկին գործերուն ո՛վ կը նայի ...

— Միւսիւ Օգսէնը ...

— Աղեկ, քանի՞ հատ թէզկեհախտար կայ մաղազային մէջը ...

— Չորս հատ, միւսիւ Լեւոնը, միւսիւ Աբիկը, միւսիւ Սօթիրին, մէյ մըն ալ միւսիւ Վիշէնցիոսը:

— Էյ օղլում, ատ պաշլըճա գործերը տեսնելու համար ատտար մարդ կայ նէ, ինտո՞ր կըլլայ կոր տէ դուն տուր օթուր չես ունենար կոր տէ պիր տիւղ գործերը վրադ կը մնայ կոր ...

— Աման դուն ալ Սեպուհ աղա՞, թօհաֆ էս, ատտար մարդ ունի ամա իշտէ մերինին միւլթաճ կըլլայ կոր եղէր, ըսել է քի ասոր գործը պաշխա է վէսսէլամ ...

— Հայտէ տուտու կերակուր չպիտի ուտենք, ըսելով օրուան միւսիւն խօսքը կը կոճկէ, չիկրնալով հօրը հարցումներուն պատասխանել, հարցումներ՝ որոնք մերկապարանոց մէջտեղ հանեցին իր սուտերը, նոյն իսկ իր բերնով, «ի բերանէ քումմէ» ի պէս:

Այս պզտիկ օրինակը, օրուան միւսիւն գործին և աշխատութեան կը վերաբերէր, հիմա նայինք զբօսանքի և երեկոյթներու մէջ ինչ գոյն ունի անիկայ:

Օրուան միւսիւն սամալարի ջուրի պէս կ'եռայ երեկոյթներու, սուառեաներու ներկայ գտնուելու համար:

Յուշատետրին մէջ, ուր ճաշարանապետին հաշիւէն, և ձեռքէ առած ասոր անոր ստակներու ցանկէն ուրիշ բան չիկայ, մէկ անկիւնը գրած կըլլայ նաեւ անունները այն ծանօթ դէմքերուն՝ որոնք սովորութիւն ունին տարին անգամ մը ներկայ եղանակներուն երեկոյթներ սարքել տօնախմբութեան առթիւ: Ահա այդ անուններու տէրերուն աղոցը կամ պարագաներուն հետ անպատճառ յարաբերութիւն կունենայ օրուան միւսիւն, որպէս զի ետ չի մնայ այդ ցատկամծիական խրախճանութիւններէն:

Երեկոյթի գիշերն է:

Օրուան միւսիւն տուն դարձին, գրպանէն կը հանէ, նոյն օրը, նոյն գիշերուան համար գնուած ա լա պին Պիր չէշիտ ճառթագոյն փողկապ մը, բարձր մաքուր օձիք մը, էշանթիւյոյն պզտիկ չիշ մը էքսթռէ, պիւսերը ու մազերը շտկելու գրպանի պզտիկ սանտր մը, չի մոռնալով սակայն անխելի ու մազերը կտրել տալ սափրիչին:

Հիմա տեսէք նիւթին է'ն գաւազտական մասը:

Օրուան միւսիւն ճաշէն վերջ մայրիկին տկանջն ի վար,

— Գուզում մայրիկ, բան մը պիտի ըսեմ ամա չէ չպիտի ըսես ...

— Կէնէ ինչ է, աղդ պիպէ ող պահսեցաւ ... փարս պիտի ուզես նէ դուն ուզէ, ես ալթըն երես չունիմ հօրըդ լախըռտը բանալու ...

— Ձէ ճանճ մարիկս, պիտի աղաչէի որ հայրիկիս ըսէիր տէ Ծնունդին հագած սեւ քաղմիր բանթալօնը տար տէ աս գիշեր հագնէի, չիւնքիւ գիտես ես, սուառէի մութլախ սեւ հագնիլ պէտք է ...

— Էյ եավրում ըսեմ, հայտէ ըսեմ ամա, անոր բանթօյններուն տիպը խոշոր է, քու երկուքդ մէջը կառնէ, նասըլ ույտուրմիշ պիտի ընես ...

— Դուն ուզէ, ես անոր ետեւի թօխան կը սըխմեմ, չըլլայ նէ աղէն երեք մատ ներս կառնես, կը շուլես, վաղը կէնէ կը քակես ...

— Ծօ քալիթաթու կըլլաս խենթ չուն, վրադ պիտի խնտացնես ...

— Դուն հէլէ մէյմը բեր ես ույտուրմիշ կընեմ ... մէյ մըն ալ ըսէ տէ սահաթին քօռտօնը տայ ...

— Ծօ ելլաս վրայդ ձգես ... խայիպ ընես նէ ...

— Ես ելէկիս մէջէն թօփուլամիշ կընեմ, հէմ ալ տիխաթ կընեմ մայրիկս, դուն հոգ մընէր ...

— Ես ատոր չեմ խառնուիր, պապայիդ ըսէ, ետքը ո՞վ ճուղապ պիտի տայ ...

— Գուզում մայրիկս, քէնէ ալ բան մը պիտի ուզեմ ...

— Ինչըն ձգեցիք քի ինչ պիտի ուզէք...

— Օղիդ թէքը տուր տէ քոավաթիս վրան իլիշտիրմիշ ընեմ, ասանկ իրիկուն է, քոավաթի թօփուլի տեղ, մէյ մըն ալ մատնիդ ...

— Ծօ վրադ պիտի խնտացունես, հիշ կնկան ըռզակը էրիկմարդու կըլլայ ...

— Կըլլայ կըլլայ մայրիկ դուն տուր ...

— Ծօ մատըդ չըլլա՞ր նէ ...

— Պզտիկ մատս կը դնեմ մայրիկ, եկուր չէ մըսեր, պարէ խըղը երեւամ այս գիշեր...

— Ծօ ատ հավէսը ունի՞ս նէ, նայէ քի աշխատիս փարայ ժողուես տէ ուզածդ առնես դնես ...

Վերջապէս մինչ այս մինչ այն, խեղճ մայրը հայրիկը լօլօղելով համոզելով ուր բանթալօնը և ժամացոյցին չղթան կառնէ և պէտք եղածին պէս կոկելով կը հագցնէ օրուան միւսիւն գաւազին:

Երեւակայեցէք մեր միւսիւն վիճակը, լայն բանթալօնով, որուն մէջ իրեն պէս երեք հոգի կը սեղմուի և չորս հինգ պզտիկներու ալ տեղ կը մնայ, օղին թէքը եքեցկլ չին ուած քոավաթին վրայ, որուն վրայ անգամ մը նայիլը բուսական է, օղը ասեղէն դանազանելու համար, և մառքիգ մատնի մը, որ կընկան ըլլալը վրայէն կը վազէ:

Ասպէս հագուած չքուած կը դիմէ սուառե, և առաջին անգամ ներս մտնելուն՝

բոլոր ներկայները գահ գահ մըն է կը փրցը-
նեն ի տես շալվարաւորաւ միւսիւն:

Հազա խախտութիւնը:

Երեկոյթին է՛ն տաք միջոցին երկու ա-
նուշի՛լ օրիորդներու մօտ նստող տիկին մը,
որ նախապէս կը ճանչնար մեր միւսիւն և
որուն ընտանիքին հետ յարաբերութիւն,
տեսութիւն ունէր, երբ կը տեսնէ թէ միւ-
սիւն իր աղջիկներուն մօտը նստած օրուան
է՛ն սուշու ֆլիւքը կ'ընէ խելակորոյս, խօսք
կ'աւանդէ:

— Տղաս տիկնամ ըրէ մօրըդ է՛ն սիրած
մասնին է գիտցած ըլլաս, օր մը փոխ ու-
ղեցի թըպսըսըն շինել սոսմ տէյի տէ չի
սուաւ...:

— Բայց տիկին... (երեսին կարմիրը կը
շատնայ)

Օրիորդներէն երկուքը մէկ,

— Օ՛... մամային մասնին... հա՛ հա՛
հա՛ էյ սա նշանաւոր նորութիւն է...

— Բայց օրիւրդ...

— Հա՛... էյ երկու աշկդ խաղայ վայ
մեղքին, նայէ քեզի որչափ կը սիրէ որ օ-
ղին թէքը պիլէ հաներ տուեր է քուսկաթը
չըլպախ չերեւայ տէյի... նայիմ խըյմէթը
գիտե՞ս...

Օրիորդները ալ աւելի գահգահնին կը
ձգեն:

— Բայց Տիկին... (միւսիւն երեսին
կարմիրը ֆիշնէ չիւրիւրի դոյն կ'աւանդ
տակաւ)

— Տղաս կ'ուզես նէ տուր ինծի պահեմ
աէ երթալնիքէն տամ, կ'եղաս ցատկուտած
ատենդ կը ձգես...:

Մինչ անդին երկու երիտասարդ քիթ
քիթի կը խօսակցին:

— Սիրելիս կ'երդնում որ իրը չէ...:

— Ես ալ կը կասկածիմ կոր...:

— Նայէ, բանթալօնին լանքը նայէ, իրեն
եաին այնքան սեղմեր է որ միտի պէս
Ֆառպէլա է եղեր...:

— Արդեօք որի՞նն է...:

— Որինը պիտի ըլլայ հայրիկինը...:

— Հիմա երեւակայեցէք աղնիւ ընթեր-
ցողք մեր օրուան միւսիւններու բուն վիճա-
կը զոր ի վերեւ պարզեցի իրենց խակաւն
գոյններով:

Ատոնք պիտի ըլլան ապագայ հայրերը,
ընտանեկան հիմերը տասնք պիտի գնեն,
իրենք ալ պիտի ունենան զաւակներ և սա-
կայն չեմ յուսար թէ սուառէի համար իրենց
սեւ բանթալօնը փոխ պիտի տան և կամ
կնիւն մասնին և օղը պէտք պիտի ըլլայ
իրենց զաւակը խախք ընելու համար անոր
ասոր մօտ:

Միւսիւ ըլլալը իրենց տարիքին բեր-
մունքն է, կը հասկնամ, իսկ միւսիւնութիւն
ընելը կամ չնելը իրենց ձեռքն է:

Քիչ մը լուրջ ըլլանք, երիտասարդ բա-
րեկամներս, քիչ մը յարգել գիտնանք այն
անուշ տարիքը որուն մէջ կը գտնուիք
դուք 16էն քսանըհինգնոցներդ:

Ձեր արժանիքը բարձրացնելու համար
ձեր միամիտ ծնողքին նառք նուրբ նշանելը
օգուտ մը չունի իրականութեան մէջ: Ձեր
հայրիկին բանթալօնը հագնելով, սուառէնե-
րու clouxն չէք կրնար ըլլալ: Ձեր մայրիկին
աղամանդները կրելով աչքեր վրանիդ չէք
կրնար հրաւիրել, այլ... լեզուներ որոց ի
լուր կը կարմրիք կը ձերմկիք և միսինիկ
սրտիկնիդ կը խոցոտուի:

Ի սրտէ կը փափաքիմ որ դուք ամէնքդ
ալ մէկմէկ Monsieur ըլլաք, ո՛չ թէ ջրհան-
կիւրներու բերնին ծամուց քաշքշուքը...
Միի՛Սիի...:

ԼԻԼԱ

ԱՐԵՒԵԼԲ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղա-
քական: — Բաժանորդագրութիւն՝ տարե-
կան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառնե-
րու համար 108 դրշ. և օտար երկիրներու
համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բաման-
տօ փողոց: ԱՐԵՒԵԼԲ հրապարակ կ'ելլէ ա-
մէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակու-
թեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լու-
րերով ու նորագոյն տեղեկութիւններով:



ԿԸ ԶԻՒՆԷ

Կը ձիւնէ : Բարիքները խօլ վայրէջում կ'իջնեն ու կը բռնին գետնին ու սանիքներուն վրայ, ներմակ, նեփ ներմակ սաւանի մը պ'սրանքը սալով : Բարիքներուն անհասնումն սարափն է որ կը տեղայ կոծկոծումով մուր երկնէն վար, դուրսի հոծ գիւղերին մէջ :

Մենեակիս քաղաքից մեռելութեան մէջ ընկողմանած. մէկ կ'ընեմ դուրսի մուշկութեանն եկող անգուսպ ձայները, որոնք կը պատեն դուրսը ձիւնին հետ, ու կուգան ծեծել պատուհանիս փեղկերը :

'Դուրսը' հովը կ'սննայ սուլումով, եւ սառեցնող ձիւնը կը խուժէ ներս ծակաբերաններէն, եւ ես՝ նստած կրակարանիս առջեւ նստած՝ կը մտածեմ ու կը խորհիմ : Սակայն ի՞նչ բան աւելի կը զբաղեցնէ զիս, զի, չեմ գիտեր, կ'զգամ միայն թէ լիւրած մըն եմ, եւ որուն դառնութիւնը կ'զգամ միայն, հոս, խորհակուած սրտիս մէջ : Ո՛վ գիտէ թերեւս աղջամուղջի տեսութեան մէջէն սիրային յիշատակներն են որ կ'ուզեն քափ առնել ներսիդիս, թերեւս անգուսպ տեղով մը որ կուզեն արքնայ մտքիս մէջ, եթէ խորհուրդներս չոստոսեն այս կամ այն նիւթին վրայ, որ մեր կ'արքնան երեւակայութեանս ծալքներուն մէջ . . . : Ո՞հ, չեմ գիտեր :

Ու կը շարունակուի նուազած ու գեղ ձայներու նոպան, զոր դուրսի մուշկութեան մէջ, կարծես կ'եղբորդէն դուրսի հոտիները : Զմեան գիւղերին լացն է ան :

Ամայի է սենեակս, միակ ես եմ որ կը խորհիմ, ո՛չ շարժում, ո՛չ շունչ կայ խոր ու անդնդային լուրքեան մէջ, քաղցոտ լուրքիւն մը՝ որ կ'ընայ նուրբանք պատհանել անհասանելի առանձնութեան : Օ՛հ չկայ, չկայ դուրսը իսկ, ո՛չ կեանք, ո՛չ ոգեւորութիւն, միայն մտաւոր հովն է որ սուլումով կուգայ ծեծել պատուհանները, մուրին մէջէն միայն լուռող միօրինակ ձայնը՝ առուիցն է, որ կը հառաչէ ու կը հառաչէ :

Կը ձիւնէ :

Ու դուրսի աններդաւանակ երաժշտութիւնը մէկը ըրած միջոցիս, մեկէն բան մը մտքիս

առարկան կը դառնայ, կուգայ կը կանգնի առջիս, կը բռնի, կը լսեմ իր մեղանուէ ձայնը, կը բովէ զիս իր հմայիչ աչերուն նայաւածքը, ու կուրծքիս տակ, սրտիս մէջ, խաղիս անկիւնը, ամէ՛ն տեղ կը տեսնեմ պատկերն անո՛ր, որ գերին բաւ զիս : Ի՞նչ երջանկութիւն, երբ երկու սրտեր իրարու կը յայնեն իրենց զգացումները, ի՞նչ երանութիւն, երբ երկու սիրող սրտեր կը դիպեն իրարու իրենց սիրոյ համբոյրը, նեղաւոր վայրերէ :

Եւ երբ կը սիրես ու կը սիրուիս, որքան երջանկ կ'զգաս ինքզինդ : Ու գոգցես կը կարծեմ պահ մը թէ, շոյաններու, սերերու եւ արցունքներու աշխարհին մէջ եմ որ կ'զգամ ապրիլ, ապրիլ՝ հոն՝ սիրոյ փառքութիւնը վայելելու ու բմբուխներու համար, ու ապրիլ՝ անոր հետ մեռնելու համար :

Պիտի ուզէի ապրիլ :

Պիտի ուզէի մեռնիլ, երբ սիրես խորհակուելով մուր երեւնայ առջիս ամէն բան . . . :

Ու այս մտածել եռումներէս յովանալով, կը դիտեմ դուրսը, որ անդադար կը ձիւնէ :

ՊԷՆՐԱՄ



ՅՈՒՆԱՆԷՍ ԶԵԿԻՆԵԱՆ

Նոր գրատուն, նոր աշխարհ :

Վհուկին տապրակն է այս գրատունը կամ ձեռնածուին շիշը :

Համարձակեցէ՛ք. գրաւի մտէ՛ք խանութ մտնելէն վերջ ո՛ր է գիրք կամ հեղինակ կուլթիւն փնտռելու համար :


Գրատան մէջ ՃՈՆՈՒԹԻԻՆ ճոխութեան հետ ՃԱՇՍԿ, ճաշակին հետ ԱԺՍՆՈՒԹԻԻՆ, ածանութեան հետ, ՎՍՏԱՀՈՒԹԻԻՆ, վրաստանութեան հետ գաւառական յանձնարարութեանց ՈՒՂՂՍՄՏՈՒԹԻԻՆ :

Ուստի դիմեցէ՛ք միշտ այս գրատուն

Գլընճընանին ժրջան արթուն

Իրիկուն ըլլայ և կամ թէ առտուն

Ինչ գէշ որ ըսէ համոզուէ առ դուն



ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Իրազէկ աղ-
բիւրէ կը տեղեկանանք թէ՛ փոխան
այցելու թեան Ազգ. Հիւանդանոցի նուի-
րատուութիւնները բախդատմամբ նա-
խորդ տարիներուն զգալի պակաս գու-
մար մը կազմած է: Այս չսպասուած
էքօնօմին, յառաջ եկած է կտուի, նը-
մանը շատոնց ի վեր չի տեսնուած ձիւ-
նին և փոթորիկին, որուն շնորհիւ կարգ
մը գրպանը չաղանող կրող բարեսէր-
ներ առիթէն օգտուելով ոչ նուէր
տուած են ոչ ալ այցելութիւն:

ՍԿԻԻՏԱՐ. — Աղքատախնամը ի ձե-
ռին ունեցած 5000 քաշ ածուխը ո-
րուն բաշխումը օգոստոսին վերապահ-
ուած էր (°) գթասիրտ թաղեցիի մը
ստիպման վրայ անցեալ շաբթու կա-
նոնաւորապէս բաշխուեցաւ ընդհանուր
աղքատաց:

ՆՈՅՆ. — Անցեալ գիշեր հոս սար-
քուած շքեղ երեկոյթի մը մէջ չիք և
ինտէլիքէնտ միւսիւ մը, մէկ քանի օր
առաջ մեռելական հանդէսի մը գըտ-
նուելով գրպանը մոռցած թիրէ ձեռ-
նոցները իբր կռի բէռլ կանթ գոր-
ծածեր է: (Ձեռնոց դնող կատուն
մուկ չի կրնար բռնել միւսի՛ւ. Ծ. Խ.)

ԳԱՏԸԳԻԻՂ. — Անցեալ իրինկուն
կամուրջէն մեկնող վերջին շոգենաւին
մէջ դեռատի օրիորդ մը մութին մէջ
մաման կորսնցնելով երբ կը բացա-
գանչէր աման ամա՛ն, երկոտանակ
մը չիք միւսիւներ զայն անկաժէ ընե-
լով ողջ առողջ մօրկանը յանձնելու են:
(Ու ըսել թէ մէկ երիտասարդին չորս
օրիորդ կը վիճակի կոր հէ՞. . . Ծ. Խ.)

ՆՈՅՆ. Տեղւոյս եկեղեցւոյն քա-
հանները անբաւական ըլլալուն, շա-
տեր մտադրած են թերթերու միջոցաւ
խնդրել ուրիշ արուարձաններու շնոր-
հունակներէն որ բարեհաճին իրենց
տուններն ալ հովուել փոխան փայլուն
մէճիտիէներու:

ԲԵՐԱ. Շաբթուս անընդհատ
տեղացող ձիւնին կարգ մը տիկիներ և
օրիորդներ թռօթուառներու վրայ
փառաւոր ծեծ մը կերան . . . ձիւնա-
գնտակներով, որոց սաստկութենէն է-
լատօ գլխարկները ուշուրմաներու պէս
օդին մէջ կը տատանէին:

ՆՈՅՆ. Երրորդութեան եկե-
ղեցւոյ ժամակոչ աղբարէն կը խնդ-
րուի որպէս զի տիկիներու տածած
յարգանքին քառորդը հաճի այրերուն
ալ չի զլանալ, ապա թէ ոչ . . . «չքին
կ'երեւանք: (Այո կ'երեւամ. . . Ծ. Խ.)

ԳՈՒՄ ԳԱՔՈՒ. — Բարեսէր տիկին
մը, քիչ շատ բարեկեցիկ, ի սէր եռա-
ձայնին, երգիչներուն ձայնին մշտա-
տեւ անուշութեան համար, իր տասը
հաւերէն ժողված 50 հատ թարմ հաւ-
կիթները նուէր զրկած է, որպէս զի
տիրացունները մէկ մէկ հատ կլլեն:
(Նուիրատուութիւնը ձեւ և կանոն
չունի Տիկին, 50 հատ ալ մեղի զրկե-
ցէք ձեզի վեցամսեայ բաժանորդ կ'ար-
ձանագրենք. Ծ. Խ.)

Արսոնսկի ԱՐԲԷՆ ԼՈՌԻՍԵՆԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի Գասսէսի քիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՆՈՅԲԶԵՆՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Զաւնալ, Թօփալեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ճմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քեյրոյիներու եւ տղայոց շիք եւ գիմացկուն փաթիւներու ճոխ միջերը մը պատրաստ ունի, որ ջերմագէտ կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—19

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրաւորած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ փաստաւոր նիւթերէ բոլորովին զերծ է:



Յիշեալ ջուրը մաշ գերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին Կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եւ

ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ ձերիտի վեգաիթի Թըպպիլիի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառուջ ջրիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ազդարանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մազերը, զգուշացէք այս կարգի աղտոտ ու գունաւոր արջուրերէն, եւ աւելի մաքուր ու զուտ անուշադու համար դիմեցէք Մահմուտ բաշա աստէսի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, որ պիտի գրանցէ մաքուր ջուր ձեր մազերուն գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Թ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

ՃԵՐԱՅ ԿԵՅ ԽԱՆԻՆ
ՏԱԿ



Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սիդանէ, Զիւսասանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Զապոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտոփն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ս. Սօղանճեան

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստուած արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և օսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլթայթել։

Վաճառատունն հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն գոհարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50—8

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։